

S.A. KYUREGHYAN, N.K. MANASYAN

**INVESTIGATING THE TEMPERATURE IMPACT ON THE
MECHANICAL PROPERTIES OF AMIDE YARNS**

The influence of high and low temperatures on the mechanical properties of fabrics made from amide yarns is studied. Mathematical models are obtained that allow to predict the mechanical properties of amide yarns, depending on the impact of temperature and its magnitude.

Keywords: thread, fabric, tensile load, linen weave, article, temperature effect.

ՀՏԴ 685.34.03

Ս.Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Վ.Վ. ՇԱՀԲԱԶՅԱՆ, Ա.Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

**ԿԱՆԱՑԻ ՄԻՋՍԵԶՈՆԱՅԻՆ ՎԵՐԱՐԿՈՒԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
(Գյումրի)**

Կատարվել է կանացի միջսեզոնային վերարկուի մշակման եղանակների վերլուծություն: Ընտրված է միլիտարի ոճի կանացի վերարկու: Ուսումնասիրվել են միջսեզոնային վերարկուների մոդելներ և դրանց մշակման պրոցեսների տարատեսակները տարբեր մեքենասարքավորումների վրա: Մեկ պրոցեսի համար (տեղադրել թևը թևատեղի փորվածքին ըստ չրթվածքների) մեր կողմից մշակվել է եղանակ, որի տևողությունը մոտավորապես 129 վայրկյանով ավելի կարճ է, քան այլ եղանակով մշակված տարբերակը:

Առանցքային բաներ. կար, դետալ, կանացի միջսեզոնային վերարկու, միլիտարի ոճ, ինժեներային քարտ, մշակման եղանակի վերլուծություն, թելային եղանակ:

Ներածություն. Միլիտարի ոճը [1] ժամանակակից հայտնի նորաձևությունն է դիզայնում: Միլիտարի կերպարը ենթադրում է զինվորական ոճի հագուստ և համապատասխան լրացումներ: Այս ոճի նույն դետալները կարող են օգտագործվել ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց հագուստներում: Դրա դետալներն ու աքսեսուարները շատ նորաձև են, և կարելի է հանդիպել գրեթե բոլոր դիզայներների կողմից առաջարկվող նորաձև հագուստներում:

Միլիտարի ոճն ի հայտ եկավ 20-րդ դարում: Քաղաքացիները փողոց էին դուրս գալիս հին զինվորական հագուստներով: Այդ համազգեստի վրա նկատելի էին խաղաղության խորհրդանիշներ: Դրանով մարդիկ ուզում էին ցույց տալ, որ դեմ են պատերմազմներին: Զինվորական համազգեստը փորձում էին դարձնել քաղաքացիական:

20-րդ դարի 40-ական թվականներին աղջիկներն արդեն քայլում էին միլիտարի ոճի հագուստներով հագնված:

Որպես անկախ ոճ՝ միլիտարին հաստատվեց առաջին համաշխարհային պատերազմից հետո: Պատերազմի ժամանակ ամբողջ միջոցներն օգտագործվում էին ռազմաճակատի, զենքի, ուտելիքի և զինվորների հագուստների վրա: Այդ պատճառով քաղաքացիական հագուստները շատ թանկ էին և դժվար ձեռք բերվող: Հարցին ճիշտ լուծում տալու համար քաղաքացիական հագուստները նույնպես կարեցին զինվորական կիսաբրոյա գործվածքից: Դրանք ոչ միայն տղամարդկանց տաբատներ և բաճկոններ էին, այլ նաև մանկական հագուստներ, կանացի խալաթներ, իսկ հետո՝ նաև կոստյումներ: Դրանք խիստ ուրվապատկերով էին և հիշեցնում էին սպայական համազգեստ: Երիտասարդ տղաներն ու աղջիկները նախընտրում էին միլիտարի ոճի հագուստներ, դրանով ուզում էին նմանվել պատերազմի հերոսներին:

Այսօր միլիտարի ոճի տարրերը հանդիպում են մի շարք հայտնի բրենդային հավաքածուներում: Այդ ոճի հագուստներին հատուկ են խիստ գծեր և կիսագրկող ուրվապատկեր: Բաճկոնի և վերարկուի վրայի կոճակները պետք է միշտ կոճակված լինեն: Այդ յուրահատկությունները հագուստում ի հայտ են եկել 20-րդ դարի 80-ական թվականներին: Ինչ վերաբերում է գույներին, առավելագույնս օգտագործվել են շագանակագույնի, կանաչի և ճահճականաչի տարբեր երանգներ:

Կանանց համար այս ոճի հագուստները դարձան ավելի էլեգանտ: Այդ հագուստներով կարելի է երևալ ոչ պակաս նուրբ, քան դասական հագուստում: Ժամանակի ընթացքում հայտնվեցին հավաքածուներ, որոնք կարված էին այլ գործվածքից, օրինակ՝ մետաքսից:

Հագուստը կարող է զարդարված լինել փողկապով կամ կանգնակ օձիքով: Այն ոչ միայն ունի յուրօրինակ արտաքին տեսք, այլ նաև պրակտիկ է, ամուր և հարմարավետ: Ամեն մի պատմական իրադարձության ժամանակ այն ունեցել է իր տարբերիչ առանձնահատկությունները: Կանայք պետք է նախընտրեն ուղիղ կիսաշրջագգեստներ կամ տաբատներ:

Բաճկոնը կարող է զարդարված լինել ուսադիրներով և ախլակներով:

Մոդելի արտաքին տեսքի նկարագիրը. Կանացի միլիտարի ոճի վերարկու, կիսաբրոյա գործվածքից, գույնը ճահճային կանաչ:

Վերարկուն ներկարովի ձևվածքով է, ուրվապատկերը՝ գրկող, երկլանջ, կոճկումը՝ 5 զույգ օղակ կոճակով, երկարությունը մինչև ծնկները (նկ. 1):

Առաջամասը բաղկացած է երկու կիսամասերից: Կիսամասերից յուրաքանչյուրը բաժանվում է գոտու գծով՝ վերին և ստորին մասերի: Վերին մասը բաժանված է երկու մասի՝ կոկետկայի և ստորին մասի: Ստորին մասում առկա է ռելիեֆային կար, որը սկսվում է թևատեղի փորվածքից և ավարտվում գոտու գծում: Գոտկազծի կարում առկա են կափույրներ[2]:



Նկ. 1. Կանացի միջսեզոնային վերարկուի էսքիզ

Թիկնամասը գոտու գծով բաժանված է երկու մասի՝ վերին և ստորին: Վերին մասը բաղկացած է երկու կիսամասերից, որոնց վրա առկա է ռեփեֆային կար, որը սկսվում է թևատեղի փորվածքից և ավարտվում գոտու գծի վրա: Թևերը ներկարովի են, երկարանի, փեշի մասում առկա են ախլակներ: Օձիքը կանգնակ տիպի է:

Արտադրանքը մշակված է մետաքսյա աստառից, որը փեշի հատվածում միացվում է արտադրանքին:

Արտադրանքի օձիքը, լանջատակը, փեշը, ռեփեֆային կարերը, կափույրները և ախլակները զարդակարված են [3]:

Խնդրի դրվածքը և մեթոդիկայի հիմնավորումը. Մեր կողմից ներկայացված կանացի միջսեզոնային վերարկուի վերաբերյալ կատարվել է մի շարք մշակված կարերի համար համեմատական վերլուծությունը (աղ):

Կարապետականների մշակման համեմատական վերլուծություն

Ձեռնարկ. Մեքեն.	Ժամանակ (վ), կատար. գործ. 1	Ժամանակ (վ), կատար. գործ. 2	Ժամանակ (վ), կատար. գործ. 3	Ժամանակ (վ), կատար. գործ. 4	Ժամանակ (վ), կատար. գործ. 5	Ընդ (վ)
ՀԱՊՀ ՎՍ Pfaff-1183	Կարել տակի օձիքը վրայի օձիքի հետ՝ 7մմ կարաբաժ. 48	Կարել արմնկային կարը 140	Կարել առաջա- մասի ռեյիեֆային կարը 184	Կարել թիկնամասի ռեյիեֆային կարը 184	Տեղադրել թևը թևատեղի փորվածքին ըստ չրթվածքների 167	723
DARBBAG Necchi 891-261	Կարել տակի օձիքը վրայի օձիքի հետ՝ 7մմ կարաբաժ. 40	Կարել արմնկային կարը 70	Կարել առաջա- մասի ռեյիեֆային կարը 150	Կարել թիկնամասի ռեյիեֆային կարը 150	Տեղադրել թևը թևատեղի փորվածքին ըստ չրթվածքների 160	570
ՀԱՊՀ ՎՍ Rimoldi F27	Եզրակարել առաջամասի վերևի մասի և ռեյիեֆի միացման կարը 178	Եզրակարել թիկնամասի վերևի մասի և ռեյիեֆի միացման կարը 178	Եզրակարել թիկնամասի կենտրոնա կան կարը 49	Եզրակարել թևի արմնկային կարը 140	Եզրակարել թևի տեղադրման կարը 164	709
DARBBAG Siruba M. 757	Եզրակարել առաջամասի վերևի մասի և ռեյիեֆի միացման կարը 168	Եզրակարել թիկնամասի վերևի մասի և ռեյիեֆի միացման կարը 168	Եզրակարել թիկնամասի կենտրոնա կան կարը 45	Եզրակարել թևի արմնկային կարը 130	Եզրակարել թևի տեղադրման կարը 154	665

Հետազոտության արդյունքները. Համեմատական վերլուծության հիման վրա մեկ օպերացիայի վերաբերյալ (տեղադրել թևը թևատեղի փորվածքին ըստ չրթվածքների) կատարել ենք աշխատանքի տեղի ապահովման ինժեներային քարտի մշակում (նկ. 2) [4].

օպերացիան – տեղադրել թևը թևատեղի փորվածքին՝ ըստ չրթվածքների, 160վ,

մասնագիտություն – մեքենա,

տարիֆային կարգ – 3,

նորմ – 160 վ,

մեքենասարքավորում – Necchi 891-261,

նյութ – կիսաբրդյա գործվածք.

կարակութերի քանակ – 10 մմ 4-5,

օպերացիայի որակի կատարման պահանջները – 80,


ասեղ – 90,

թևի տեղադրման կարի լայնություն – 10 մմ:

Հնարավոր են նաև 2 մմ-ից ոչ ավելի շեղումներ:

Եզրակացություն. Ելնելով աղյուսակում բերված տվյալներից՝ մեր կողմից ուսումնասիրված մոդելի վերաբերյալ (միջսեզոնային կանացի վերարկու) պարզվեց, որ նույն օպերացիաներից, որոնք կատարված են տարբեր ձեռնարկություններում և տարբեր մեքենաներով, առավել արդյունավետը եղել է DARBBAG ձեռնարկության կողմից մշակված միջոցը, որը մշակվել է Necchi 891-261 մեքենայով 570 վայրկյանում և տարբերվում է մյուս տարբերակներից (Pfaff-1183) 129 վայրկյանով: Հետևաբար, վերարկուի մշակման մեր ընտրած տարբերակը համապատասխանում է DARBBAG ձեռնարկության մշակած տարբերակին:

Համեմատական վերլուծության հիման վրա մեկ օպերացիայի վերաբերյալ (տեղադրել թևը թևատեղի փորվածքին՝ ըստ չրթվածքների) կատարել ենք աշխատանքի տեղի ինժեներային քարտի մշակումը:



Նկ. 2. Թևի տեղադրումը փորվածքին

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. www.matrony.ru/stil-militari-osennyaya-gotovnost-1/
2. **Дзахмишева И.Ш., Балаева С.И., Блиева М.В.** Товароведение и экспертиза швейных, трикотажных и текстильных товаров. – М., 2007. - 346 с.
3. www.google.com/search?q=платья+милитари&source=lnms&tbn=isch&sa=X&ved=0ahUKEwiX9qCI7NHMAhXrIpoKHcI9DoEQ
4. **Оганесян С.М.** Создание совмещенного технологического процесса стачивания и разутюживания швов с применением швейно-гладильного агрегата: Дис. ... к.т. н. - Киев, 1994. - 116с.

С.М. ОГАНЕСЯН, В.В. ШАХБАЗЯН, А.А. АКОПЯН

**СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ СПОСОБОВ ОБРАБОТКИ ЖЕНСКОГО
ДЕМИСЕЗОННОГО ПАЛЬТО**

Проводится анализ методов обработки женского демисезонного пальто. Выбран образец в стиле милитари. Изучены модели демисезонного пальто и разновидности процессов обработки на разном оборудовании. Для одной из операций: втачивание рукава по пройме надсечками, наиболее эффективным методом оказался предложенный нами метод (на 129 секунд меньше) по сравнению с другими методами обработки.

Ключевые слова: шов, деталь, демисезонное женское пальто, стиль милитари, инженерная карта, анализ метода обработки, ниточный метод обработки.

S.M. NOVHANNISYAN, V.V. SHAHBAZYAN, A.A. HAKOBYAN

**COMPARATIVE ANALYSIS OF TREATMENT OF A WOMAN'S OVER
COAT**

An analysis of the methods for processing a female overcoat is carried out. A military style sample is selected. Models of overcoats and types of processing processes on different equipment are studied. For one of the operations, sharpening the sleeve on the armhole notches, the method proposed by us turned out to be the most effective one (129 seconds less).

Keywords: seam, detail, female overcoat, military style, engineering map, processing method analysis, thread processing method.

УДК 677.021

С.А. КЮРЕГЯН, А.Д. АСАТРЯН

**ИССЛЕДОВАНИЕ СПЕЦИФИЧЕСКИХ ТЕРМОСТОЙКИХ НИТЕЙ
(Гюмри)**

Исследованы показатели одноциклового растяжения термостойких нитей и их усадки при влажно-тепловых воздействиях. Для исследования выбраны следующие нити: полифеновая, фенилоновая, терлоновая, фториновая 4МБ, СВМ и аримидная. В работе использован стандартный метод определения компонентов полного удлинения при растяжении нитей нагрузкой, меньшей разрывной.

Ключевые слова: термостойкие нити, влажно-тепловой, усадка, ткань, деформация, статическая нагрузка.

Введение. В настоящее время термостойкие нити используют во многих отраслях промышленности. Их применяют для высокотемпературной тепло- и электроизоляции изделий. Такие нити при повышенной температуре,